ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 26 » նոյեմբեր 2025թ. No 7270 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 2367-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության N 01/5621-25 առ 17.11.2025թ. գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1.ՀՀ առողջապահության նախարարի 2023 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 2367-Ա հրամանը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3^1 կետով. «Նախկինում գրանցված Հալիքսոլ դեղահատեր 30մգ դեղի N 19785 գրանցման հավաստագիրը ճանաչել ուժը կորցրած՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:»:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

3. ՀՀ ԱՆ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա.Բաղրյանին՝

1) սույն հրամանը ստանալուց հետո ապահովել լրամշակման կատարումը գրանցամատյանում, ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված կարգով, նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը.

Invalid signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ